www.shiraz.am

ՀՀ Գյումրու քաղաքապետարան
Հովհաննես Շիրազի տուն-թանգարան

ՀՀ, Գյումրի, 3104, Վարպետաց փ. 101
Հեռ:tel: +(37494) 434227
fax +(374312) 55142
E-mail: shirazmuseum@gmail.com
101, str.Varpetac, 3104, Gyumri, RA

Hovhannes SHIRAZ House-Museum

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավար՝ Սամվել Բալասանյանին

Հարգելի պրն Բալասանյան

Հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռ. Սանոյանի (կատ. Վ. Դավթյան) 02/11650-19 պատասխանը թանգարանի 21.08.2019թ. Դ/11490 գրությանը, խնդրում եմ Ձեր թույլտվությունը՝ կնքել պայմանագիր <<Ջանան>> ՍՊԸ հետ թանգարանի նկուղից վարձավճարով 60,6 քառ. մետր տարածք հատկացնելու համար:

Մասնավորապես <<Ջանան>> մշակութային կենտրոնում կգործի արվեստի և արհեստի վարպետների անհատական ցուցահանդեսներ, վարպետաց դասեր, ազգային տարազի ցուցադրություններ և լուսանկարման ծառայություն, Գյումրու վարպետների կողմից պատրաստված հուշանվերների ցուցասրահ:

Այս ամենը չի խաթարի թանգարանի աշխատանքը, լրացուցիչ եկամուտ կբերի թանգարանին, որով կարող է վճարվել թանգարանի որոշակի (կոմունալ, կենցաղային, մասնակի ընթացակարգային վերանորոգման կամ այլ) ծախսեր: Լրացուցիչ այցելություններ կարող է բերել թանգարան և բարձրացնել հետաքրքրությունը դեպի այն՝ խթանելով զբոսաշրջությանը:

Մինչ այս, համաձայն համայնքի ավագանու <<14>> նոյեմբերի 2014 թ. N 165-Ա որոշման թանգարանը կնքել է պայմանագիր <<Կոմպասս>> ՀԿ հետ նկուղի 95,9 քառ. մ տարածքը անվարձահատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին, պայմանագիրը չի շարունակվել տվյալ տարածքում <<Կոմպասս>> ՀԿ-ի աշխատանքների դադարեցումից հետո:

*« 23 » սեպտեմբեր 2019 թ.*
ք. Գյումրի

Հարգանքով.
Արա Պապանյան
Թանգարանի տնօրեն

*05520865*

23 09 2019 թ.
13182